

ՀԱՅՏԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՔԱՏՈՐ ԵՎ ՎԻՆՂԻԿԱՑԻՈՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ

Քրիստինե Գաբուզյան

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի¹ 344-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետ՝ փակագծում հավելելով՝ հոդված 277²: Նման ձևակերպումը իրավաբանական գրականությունում³ և դատական պրակտիկայում⁴ հիմք է հանդիսացել այն կարծիքի, որ նշված դրույթը վերաբերում է միայն նեգատոր հայցերին:

Այսպես, Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով նշված հարցին, նշել է, որ նման հետևությունը հիմնավորվում է նրանով, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետում ամրագրված իրավանորմի բովանդակության շարադրանքից անմիջապես հետո օրենսդիրը փակագծերում մատնանշել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, որը վերաբերում է տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումներից սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությանը (նեգատոր հայցերին):

Եթե օրենսդրի կամքն ուղղված լիներ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի բոլոր տեսակի խախտումների վերացման պահանջների վրա հայցային վաղեմությունը չտարածելուն, ապա քննարկվող հոդվածում այլևս անհրաժեշտություն չէր լինի հատուկ մատնանշելու տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների մասին, այլ ուղղակի կարող էր սահմանվել, որ սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի իրավունքի ցանկացած խախտման վերացման պահանջների նկատմամբ հայցային վաղեմությունը չի տարածվում:

Մինչդեռ քննարկվող հոդվածը նման կարգավորում չի նախատեսել, հետևաբար սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ կապված իրավունքի խախտումների վերացման պահանջների (վինդիկացիոն հայցերի) նկատմամբ հայցային վաղեմությունը տարածվում է, իսկ քննարկվող նորմի

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրք, ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ընդունվել է 05.05.1998, ուժի մեջ է մտել 01.01.1999:

² Քաղաքացիական օրենսգրքի այս ձևակերպումը, ըստ էության, նույնական է ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 208-րդ հոդվածի համապատասխան ձևակերպմանը:

³ Տե՛ս **Բարսեղյան Տ. Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 4-րդ հրատ., դասագիրք, «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, էջ 289, Гражданское право. Учебник. Том I / Под ред. доктора юридических наук, профессора **О.Н. Садикова**, М., Юридическая фирма «КОНТРАКТ», Изд. «ИНФРА-М», 2006, 493 с., էջ 230, Гражданское право. Учебник, переработанное и дополнено, том 1, под редакцией **А.П. Сергеева**, **Ю.К. Толстого**, Изд. «Проспект», М., 2005, էջ 363, **Невзгодина Е.Л.**, Проблемы института исковой давности, Юридические науки, Вестник Омского университета, № 3, Омск, 2005, էջ 99-100, **Кушнир И.В.**, Гражданское право, 2013, <http://be5.biz/pravo/g002/14.html>

⁴ Տե՛ս օրինակ, Ռազմիկ, Սիրանուշ, Կարեն, Տիգրան Մանուչարյանները և Կարինե Հարությունյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԴ/0502/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93536>

համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում միայն սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների վերացման պահանջների վրա¹:

Նախ նշենք, որ օրենսդրի նման մոտեցումը՝ նեգատոր հայցերի վրա հայցային վաղեմություն չտարածելը, անշուշտ, տրամաբանական է ու անքննելի:

Տվյալ հայցի նկատմամբ հայցային վաղեմություն չտարածելը բացատրվում է նրանով, որ այն օգտագործվում է տևական իրավախախտումից պաշտպանվելու համար, և իրավախախտի գործողությունները կարող են լինել ինչպես մեկանգամյա, այնպես էլ բազմակի, դրա համար էլ սեփականատիրոջ անհապաղ արձագանքի բացակայությունը գույքի օգտագործման խոչընդոտների ի հայտ գալու նկատմամբ չպետք է ինքնին առաջացնի նրա համար բացասական հետևանքներ²:

Բացի այդ, կարծում ենք, հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, որ նեգատոր հայցի հիմքը առաջացած լինի շատ վաղուց, սակայն հայցվորին սկսի խանգարել միայն որոշ, այդ թվում՝ տևական ժամանակ անց. օրինակ՝ հարակից տարածքից բարձր աղմուկը սկզբում առանձնապես չէր անհանգստացնում, բայց հետագայում արյան բարձր զարկերակային ճնշման պատճառով աղմուկը դառնում է ոչ միայն անհանգստացնող, այլև առողջությանն անմիջական վտանգ ներկայացնող: Նման իրավիճակներում անընդունելի կլինեի անձին զրկել իր սեփականատիրոջ իրավագործություններն անխոչընդոտ իրականացնելու, ուստիև նեգատոր հայց ներկայացնելու հնարավորությունից:

Այստեղ հարկ ենք համարում ևս մեկ անգամ ընդօժել, որ հայցային վաղեմության չկիրառելիությունը վերաբերում է միայն նեգատոր հայցերին, այն է՝ հայցային վաղեմությունը տարածելու արգելքը վերաբերում է սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ոչ բոլոր խախտումների վերացման պահանջներին, այլ միայն այն խախտումներին, որոնք կապված չեն եղել *տիրապետումից զրկելու* հետ:

Սակայն իր տարբեր որոշումներում Վճռաբեկ դատարանը, խոսելով նեգատոր հայցի մասին, մատնանշում է թե՛ տնօրինման ու օգտագործման և թե՛ տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների մասին³:

¹ Տե՛ս նախորդ հղումի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93536>, ինչպես նաև Կարինե և Սամվել Զարգարյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ԵԿԴ/0181/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=93532>

² Տե՛ս **Кондратенко З.К., Полушин Д.С.**, Негаторный иск в российском гражданском праве, Вестник Марийского государственного университета. Серия «Исторические науки. Юридические науки», г. Йошкар-Ола, 2019, Т. 5, № 2, С. 173-180, էջ 176

³ Վճռաբեկ դատարանը հանգում է այն եզրակացության, որ նեգատոր հայցի ներկայացման դեպքում միաժամանակ պետք է առկա լինեն հետևյալ երկու պայմանները.

1) հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական (տիտղոսային) տիրապետող,

2) հայցի ներկայացման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի գույքի սեփականատիրոջը կամ օրինական (տիտղոսային) այլ տիրապետողին **օգտագործել և/կամ տնօրինել** (ընդգծումը –Ք. Գ.) գույքը ((Լևոն Արշակունին ընդդեմ Կոմիտաս Հայրապետյանի թիվ ԿԴ3/0450/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95072>):

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը նեգատոր հայցը համարել է նաև սեփականության իրավունքի պաշտպանության միջոց, որն ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի **օգտագործման կամ տիրապետման** (ընդգծումը – Ք.Գ.) իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը (Ռազմիկ, Սիրանուշ, Կարեն, Տիգրան Մանուչարյանները և Կարինե Հարությունյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, Երևանի քաղաքապետարանի թիվ ԵԿԴ/0502/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ

Նեգատոր ու վինդիկացիոն հայցերի առաջին հայացքից ակնհայտ երևացող տարբերությունը միայն թվացյալ է. այդ մասին է վկայում նաև խայտաբղետ դատական պրակտիկան: Մինչդեռ նշված հայցերի սահմանազատումը կարևոր է, ի թիվս այլնի, նաև հայցային վաղեմության ինստիտուտի ճիշտ կիրառության համար:

Այսպես, 2018 թ. սեպտեմբերի 3-ի թիվ ՇՂ/0911/02/18 գործով¹ կայացված վճռով դատարանը տիրապետող չհանդիսացող սեփականատիրոջ կողմից վտարման պահանջով ներկայացված հայցը համարել է նեգատոր և չի կիրառել հայցային վաղեմություն: Կայացված վճիռը ուժի մեջ թողեց նաև վերաքննիչ դատարանը:

Մեկ այլ քաղաքացիական գործով (թիվ ՇՂ/0069/02/18, 2019 թվականի ապրիլի 17) ավտոտնակն ուրիշի ապօրինի տիրապետությունից հետ պահանջելու մասին հայցը դատարանը դիտել է որպես վինդիկացիոն և մերժել այն՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

Սակայն վերաքննիչ դատարանն անհիմն է համարել հայցային վաղեմության կիրառմամբ հայցը մերժելը: Վերաքննիչ դատարանը նշել է հետևյալը. «Դատարանը անտեսել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներն այն մասին, որ հայցային վաղեմությունը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, իսկ գործով հաստատվել է այն հանգամանքը, որ հայցվորը հանդիսանում է պահանջվող գույքի սեփականատերը, որի իրավունքը խախտելով՝ Պատասխանողը տիրապետում է վիճելի ավտոտնակը և այդ իրավունքի խախտումը վերացնելու պահանջով է Հայցվորը դիմել Դատարան»:

2019 թվականի օգոստոսի 16-ի թիվ ԼՂ2/0138/02/19 գործով Դատարանը մերժել էր հայցը (գույքն ուրիշի ապօրինի տիրապետությունից հետ պահանջելու և վտարելու պահանջներ)՝ հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով՝ նշելով, որ վինդիկացիայի դեպքում սեփականատերը չի տիրապետում վիճելի գույքը, իսկ նեգատոր հայցի դեպքում սեփականատերը տիրապետում է վիճելի գույքը, սակայն ենթադրյալ ապօրինի գործողությունների պատճառով չի կարող այն օգտագործել ըստ նպատակային նշանակության, իսկ տվյալ դեպքում ներկայացված պահանջը նեգատոր չէ:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև օրս դատարանների համար դժվարություն է ներկայացնում այս կամ այն պահանջը

դատարանի 18.07.2014 թվականի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=93536>, Կարինե և Սամվել Ջարգարյաններն ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ԵԿԴ/0181/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=93532>):

¹ 2018թ. սեպտեմբերի 3-ի թիվ ՇՂ/0911/02/18 գործով կայացված վճռով թե՛ առաջին ատյանի ու թե՛ վերաքննիչ դատարանները, տիրապետող չհանդիսացող սեփականատիրոջ կողմից վտարման պահանջով ներկայացված հայցը համարելով նեգատոր և չկիրառելով հայցային վաղեմություն, անտեսել են նաև պատասխանողների վեճի առարկա գույքը շուրջ տասը տարուց ավելի տիրապետելու փաստը:

Մինչդեռ, 2015թ. նոյեմբերի 27-ի թիվ ԵԿԴ/2393/02/12 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման վերաբերյալ գործում ի թիվս այլնի կարևորելով գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ, նշել է, որ պատասխանողների, նաև՝ վերջիններիս իրավանախորդների վարքագիծը, մասնավորապես՝ նրանց կողմից 10 տարուց ավելի տիրապետմանը որևէ կերպ չխոչընդոտելը ևս կարող էին ակնհայտ վկայել գույքի տիրապետումից, օգտագործումից և տնօրինումից սեփականատիրոջ մեկուսացման մասին:

Այսպիսով, գրանցված սեփականատիրոջ առկայության դեպքում ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագում թույլատրելի նույնպես վկայում է, որ նեգատոր հայց չի կարող լինել այն դեպքերում, երբ գույքն այլ անձի տիրապետության տակ է:

ճիշտ որակելը: Ընդ որում, հիմնական դժվարությունը կապված է ներկայացված պահանջը վիճակագրի կամ նեգատոր որակելու համար «տիրապետման» իրավագրության ունեցած նշանակության հետ, քանի որ, ինչպես տեսնում ենք, շատ հաճախ, երբ գույքը տիրապետում էր այլ անձ, քան գրանցված սեփականատերը, այնուամենայնիվ դատարաններն այդ պահանջները որակել են որպես նեգատոր և չեն կիրառել հայցային վաղեմությունը:

Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, որի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ, պաշտպանություն է շնորհում նաև այն դեպքում, երբ առկա է տիրապետման իրավունքի խախտում: Թեպետ Վճռաբեկ դատարանի որոշումների վերլուծությունից, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածից ակնհայտ է, որ նեգատոր հայցի դեպքում նախ և առաջ խուսքը տնօրինման և օգտագործման իրավագրությունների համար խոչընդոտների առկայության մասին է, սակայն չի բացառվում նաև տիրապետման իրավագրության սահմանափակում (այդ մասին է վկայում նաև դատական պրակտիկան¹), ուստի կարծում ենք՝ հայցային վաղեմության ժամկետի կիրառելիության հարցը պետք է դիտարկվի ոչ թե տիրապետումից զրկված լինելու կամ չլինելու տեսանկյունից, այլ, այսպես ասած, գույքի և «իրավախախտի» միջև գոյություն ունեցող հարաբերության տեսանկյունից, մասնավորապես՝ արդյո՞ք վերջինս տիրապետում է վեճի առարկա գույքը, թե՞ ոչ: Այսինքն՝ ամեն դեպքում շեշտը պետք է դրվի տիրապետման իրավագրության վրա²:

¹ Գործերից մեկով, օրինակ, ավտոտնակ և մառան մուտք գործելու համար նախատեսված ընդհանուր օգտագործման ճանապարհի աջ կողմում պարսպի կառուցումով խախտվում էին սեփականատիրոջ՝ գույքն օգտագործելու և փաստացի տիրապետելու իրավունքները (Լևոն Արշակունին ընդդեմ Կոմիտաս Հայրապետյանի թիվ ԿԴ3/0450/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը):

² Ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու գործով ապացուցման առարկան պատասխանողի կողմից վեճի առարկա գույքը ապօրինի տիրապետելու և հայցվորի կողմից տվյալ գույքի սեփականատեր հանդիսանալու փաստերն են (ի թիվս այլնի Միսակ-Նուբար Թեբեկյանն ընդդեմ Ռուբեն Քոչարի և մյուսների թիվ ԵԿԴ/0805/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=83954>, «Շանթ Պյուն» ՍՊԸ-ն ընդդեմ Ռազմիկ Մանուկյանի և Ընկերության՝ գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից վերադարձնելու պահանջի մասին թիվ ԿԴ1/0811/02/08 գործով Վճռաբեկ դատարանի 2010 թվականի մարտի 12-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=57955>, «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի թիվ ԵՄԴ/0462/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2019 թվականի հուլիսի 3-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=134837>):

Իսկ նեգատոր հայցերով հարուցված գործերի ապացուցման առարկայում որպես փաստ ներառվում են հետևյալ երկու պայմանները. 1) հայցվորը հայցի հարուցման պահին պետք է լինի գույքի սեփականատեր կամ այլ օրինական (տիտղոսային) տիրապետող, 2) հայցի ներկայացման պահին պետք է առկա լինի երրորդ անձի կողմից թույլ տրված այնպիսի գործողություն կամ անգործություն, որը խոչընդոտի գույքի սեփականատիրոջը կամ օրինական (տիտղոսային) այլ տիրապետողին օգտագործել և/կամ տնօրինել գույքը (Լևոն Արշակունին ընդդեմ Կոմիտաս Հայրապետյանի թիվ ԿԴ3/0450/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95072>, Վարուժան Ավազյանն ընդդեմ Քնարիկ և Կորյուն Հարությունյանների թիվ ԵԱԲԴ/4311/02/15 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2019 թվականի մայիսի 14-ի որոշումը, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=100620>), չնայած, ինչպես արդեն նշեցինք, չի բացառվում նաև տիրապետման իրավագրության իրականացման խոչընդոտների առկայություն, որը, սակայն, չի ենթադրում վեճի առարկա գույքի գտնվելը իրավախախտի տիրապետման ներքո:

Դա էլ հենց պետք է լինի չափանիշ նեգատոր ու վինդիկացիոն հայցերը սահմանազատելու համար: Կարծում ենք, թե՛ վինդիկացիոն և թե՛ նեգատոր հայցերի դեպքում կարող է խոսք լինել երեք իրավագործություններից յուրաքանչյուրի իրականացման խոչընդոտների առկայության մասին: Այստեղ վճռորոշը, կարևորն այն է, որ գույքը չպետք է միևնույն ժամանակ գտնվի նաև այդ խոչընդոտները ստեղծող անձի տիրապետության ներքո: Հակառակ պարագայում գործ կունենանք ոչ թե նեգատոր, այլ վինդիկացիոն հայցի հետ, քանի որ այն դեպքում, երբ գույքը տիրապետում է սեփականատեր չհանդիսացող անձը, խոսում ենք արդեն վինդիկացիոն հայցի մասին: Ուրեմն նեգատոր և վինդիկացիոն հայցերի սահմանազատման հիմքում պետք է դրվի ոչ թե սեփականատիրոջ տիրապետման իրավագործությունից զրկված լինել-չլինելու հարցը, այլ գույքի՝ ոչ սեփականատիրոջ (կամ էլ այլ օրինական տիրապետողի) տիրապետության ներքո գտնվելու հարցը:

Գրականության մեջ կարծիք է արտահայտվել, որ հայցերի սահմանազատման համար բավական չէ տիրապետման իրավագործության խախտման փաստի վերահանումը: Կարևոր է հաստատել, թե արդյոք պարտավոր անձը հետապնդել է գույքին տիրանալու և այն որպես իրենն օգտագործելու նպատակ, թե նա միայն պայմաններ է ստեղծել, որոնց պարագայում սեփականատերը չի կարող օգտագործել և տնօրինել իր գույքը, բայց պատասխանողը մտադրություն չունի տիրելու վիճելի գույքը: Այլ խոսքով՝ դատարանին անհրաժեշտ է պարզել, թե տիրապետման իրավագործությունը խախտվում է նպատակադրված, թե՞ ակամայից: Եթե պարտավոր սուբյեկտը (պատասխանողը) տիրացել է գույքին սեփական օգտագործման համար, միևնույն ժամանակ սեփականատերն ընդհանրապես զրկված է տիրապետումից, պետք է կիրառվի վինդիկացիոն հայց: Իսկ եթե պարտավոր սուբյեկտը (պատասխանողը), չունենալով գույքին տիրանալու մտադրություն, ստեղծել է խոչընդոտներ սեփականատիրոջ իրավագործությունների (այդ թվում՝ տիրապետման) իրականացման համար, ներկայացվում է նեգատոր հայց¹:

Սակայն, գույքը ապօրինի տիրապետողի մոտ գտնվելը և վերջինիս՝ գույքին տիրանալու մտադրությունը հայցերի սահմանազատման չափանիշ դիտելը բավարար չեն հայցային վաղեմության կիրառման ընթացքում առաջացող խնդիրները լուծելու համար:

Այս տեսանկյունից ուշադրության է արժանի 2018 թվականի ապրիլի 6-ի թիվ ՇՂ/5513/02/16 գործը, որով վերաքննիչ դատարանը, ներկայացված հայցը համարելով նեգատոր և կիրառելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը, բեկանել և փոխել էր առաջին ատյանի դատարանի վճիռը, որով դատարանը մերժել էր պատասխանողին վտարելու և նրա կողմից կառուցված ինքնակամ շինությունը քանդելու եղանակով նրա ապօրինի տիրապետումից հողամասը վերադարձնելու պահանջը՝ այն անհիմն լինելու և պահանջի նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով:

Տվյալ դեպքում չնայած սեփականատերը զրկված է եղել իր հողամասի համապատասխան հատվածը տիրապետելու հնարավորությունից վերջինս այլ անձի տիրապետման ներքո գտնվելու պատճառով, բայց Վերաքննիչ դատարանի դիրքորոշումը պահանջը նեգատոր որակելու մասով, կարծում ենք, թեև այդքան էլ ճիշտ չէր գործող կարգավորումների պարագայում, սակայն միակ հնարավոր լու-

Այստեղից ակնհայտ է դառնում, որ նշված հայցատեսակների տարբերակման կարևոր չափորոշիչը գույքն ուրիշի ապօրինի տիրապետության տակ գտնվելու փաստն է:

¹ См. у Зарубин А. В. и др., под общей редакцией В. Н. Соловьева, ответственный редактор С. В. Потапенко, Гражданско-правовые способы защиты права собственности на недвижимость: научно-практическое пособие, 3-е изд., перераб. и доп., Изд. Юрайт, М., 2014, 458 с., https://studme.org/89130/pravo/sootnoshenie_negatornogo_iska_drugimi_iskami_ustraneni_prepyatstviy_realizatsii_prav_sobstvennika_zako

ծունն էր՝ նկատի ունենալով, որ անհայտ կարգավիճակ ունեցող կառույցների (ինքնակամ կառույցի) նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք չի կարող ճանաչվել¹, և հետևաբար անձի մոտ չի կարող առաջանալ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Այսպիսով, կարծում ենք, որ այն դեպքում, երբ ի սկզբանե բացառված է հայցը մերժելու արդյունքում անձի մոտ սեփականության իրավունքի առաջացման հնարավորությունը, դատարանը չպետք է գրկի սեփականատիրոջը պաշտպանության հնարավորությունից, քանի որ գույքը փաստացի տիրապետող ի սկզբանե չի ունեցել (և ժամանակի հոսքի կամ այլ հանգամանքների փոփոխության արդյունքում ոչ մի պարագայում չի էլ կարող ձեռք բերել) սեփականության իրավունքի օրինական ակնկալիք, ուստի նման մոտեցումը (վինդիկացիա որակելն ու հայցային վաղեմություն կիրառելը) չի նպաստում սեփականության իրավունքի շարունակականության ապահովմանը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների շահերի ապահովմանը, գույքի նկատմամբ իրավունքների և պարտականությունների հարցում որոշակիության ապահովմանը և արդյունքում՝ քաղաքացիական շրջանառության կայունությանը:

Ուստի ճիշտ չէ նման պահանջների նկատմամբ հայցային վաղեմության կիրառումը բացառելը: Հայցային վաղեմությունը, կոչված լինելով պաշտպանել անձի փաստացի դրությունը, որին ապավինելու ակնկալիք է ձևավորվել անձի մոտ տևական ժամանակի հոսքի արդյունքում, չի կարող կիրառվել որպես պաշտպանության միջոց այն դեպքում, երբ անձի մոտ չկա նման ակնկալիք:

Այսպիսով, առաջարկում ենք 344-րդ հոդվածի 4-րդ մասում հստակեցնել, որ հայցային վաղեմության ժամկետը չի տարածվում սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի խախտման վերացման պահանջների վրա, եթե այդ խախտումները կապված չեն եղել գույքն այլ անձի տիրապետմանն անցնելու հետ:

Ընդ որում, դրույթը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել նաև տիրապետումը հետագայում օրինականացնելու հնարավորությունը՝ նման կերպ բացառելով հայցային վաղեմության ժամկետի կիրառումն այն դեպքում, երբ գույքի փաստացի տիրապետողի մոտ չի կարող առաջանալ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Նման ձևակերպմամբ նախ կաշտպանվի փաստացի տիրապետողի օրինական ակնկալիքը, և երկրորդ՝ հստակ կլինի փաստացի տիրապետողի կողմից գույք ձեռք բերելու պահը, քանի որ սահմանման մեջ գործածվող «տիրապետումից զրկել» արտահայտությունը պարտադիր չէ, որ վերաբերի հենց տիրապետումը մեկ անձից մյուսին անցնելուն (մինչդեռ նեգատոր հայցի դեպքում անձը կարող է զրկվել տիրապետումից, բայց միևնույն ժամանակ տիրապետումն այլ անձի անցած չլինի):

Ինչպես տեսնում ենք, այն դեպքերում, երբ սեփականատերը փաստացի չի իրականացնում իր տիրապետման իրավագործությունը, հայցային վաղեմության ժամկետը լրացած լինելու պատճառով զրկվում է իր սեփականության իրավունքի պաշտպանությունն իրականացնելու հնարավորությունից՝ միևնույն ժամանակ շարունակելով մնալ որպես գույքի գրանցված սեփականատեր անգամ վինդիկացիոն հայցը մերժող դատական ակտի կայացումից հետո:

Նման մոտեցումն ունի իր բացատրությունը: Օրենսդիրը, նկատի ունենալով գույքի նկատմամբ սեփականության իրավունքի շարունակականության ապահովման կարևորությունը, ի թիվս այլնի՝ հաշվի առնելով նաև գույքի սեփականատերերի կողմից պարտականությունների կատարումն ապահովելու անհրաժեշտությունը:

¹ Տե՛ս Վարդիթեր Ավոյանն ընդդեմ Գայանե և Կարինե Հայրապետյանների, Վարդգես Վարդանյանի թիվ 3-84(ՎԴ) քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2008 թ. փետրվարի 1-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=42159>

նը¹, սահմանել է, որ սեփականության իրավունքից հրաժարվելը հիմք չէ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները և պարտականությունները դադարելու համար մինչև այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը (քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդված, մաս 2):

Այսպիսով, վիճակագրության հայցի մերժումը չի դադարեցնում սեփականատիրոջ իրավունքները և հիմք չէ այլ անձի մոտ սեփականության իրավունքի առաջացման:

Իսկ նման պարագայում գույքը փաստացի տիրապետող անձի մոտ սեփականության իրավունք կարող է առաջանալ միայն ձեռքբերման վաղեմության ուժով: Իսկ ձեռքբերման վաղեմությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված որոշակի ժամկետ լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուս անձի կողմից այդ իրավունքի դադարման միջոց է² և միևնույն ժամանակ ժամանակահատված, որի ընթացքում անշարժ գույքի սեփականատիրոջ կատարած գործողությունները՝ ուղղված գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պաշտպանությանը, կարող են ազդել գույքի փաստացի տիրապետողի կողմից նրա՝ գույքը որպես սեփական տիրապետելու բարեխղճության վրա³:

Այսպիսով, Քաղաքացիական օրենսգրքի 280-րդ և 187-րդ հոդվածները չի կարելի դիտարկել առանձին նկատի ունենալով, որ հենց 280-րդ հոդվածն է երաշխավորում անձի իր սեփականության իրավունքը պաշտպանելու իրավագործությունն այնքան ժամանակ, քանի դեռ մեկ այլ անձ ձեռք չի բերել տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունք⁴:

Այստեղ կարծես կոլիզիա է առաջանում հայցային վաղեմության ու ձեռքբերման վաղեմության ինստիտուտների միջև. մի կողմից եռամյա հայցային վաղեմութ-

¹ ՀՀ քաղ. օր.-ի 280 հոդվածի 2-րդ մասի հիմքով ոչ միայն շեշտվում են սեփականության իրավունքի շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, այլև սեփականատիրոջ կողմից սեփականության իրավունքի իրացման հետ կապված պարտավորությունները, (Սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-667 որոշում, կետ 3, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-667.htm>):

² Տե՛ս նաև Նելսոն Կոչնակյանն ընդդեմ Հասմիկ Կոչնակյանի և մյուսների թիվ ԵԱԲԴ/1493/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թ. դեկտեմբերի 27-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=73727>, Խոսրովիկ Հովհաննիսյանը և Հասմիկ Պետրոսյանն ընդդեմ Գառնիկ Արմեն, Հայկազ Հովհաննիսյանների, Կարինե Մարգարյանի և Հասմիկ Ալեքսանյանի և ըստ հակընդդեմ հայցի Գառնիկ Հովհաննիսյանի, Կարինե Մարգարյանի ընդդեմ Խոսրովիկ Հովհաննիսյանի և Հասմիկ Պետրոսյանի թիվ ԵԱԴԴ/0439/02/12 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2013 թ. նոյեմբերի 13-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87841>

³ Տե՛ս նույն տեղը՝ թիվ ԵԱԴԴ/0439/02/12 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87841>, Լևոն Մելքոնյանն ընդդեմ Արուսյակ, Կարեն, Լևոն, Արմեն Կարապետյանների և Հեղուշ Կարապետյանի իրավահաջորդ Ալբերտ Կարապետյանի թիվ ԵԿԴ/2393/02/12 քաղաքացիական գործով 2015 թ. նոյեմբերի 27-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=103184>

⁴ Ուշագրավ է 2006 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-667 որոշմամբ արտահայտված հետևյալ դիրքորոշումը. «ՀՀ քաղ. օր.-ի 280 հոդվածի 2-րդ մասի դրույթները հանդես են գալիս որպես ՀՀ Սահմանադրության 8 և 31 հոդվածներում ամրագրված սեփականության իրավունքի ապահովման միջոց՝ այն դեպքում, երբ առկա է սեփականության իրավունքից հրաժարումը, սակայն այլ անձի կողմից այդ գույքի նկատմամբ դեռևս սեփականության իրավունք ձեռք չի բերվել» (կետ 3):

Նշված որոշմաբ Սահմանադրական դատարանը վերահաստատել է նաև իր՝ 2006 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ ՍԴՈ-650 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը, համաձայն որի՝ քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 2-րդ մասը «սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիք է» (Սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 21-ի թիվ ՍԴՈ-667 որոշում, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-667.htm>):

յան ժամկետ է սահմանված ուրիշի ապօրինի տիրապետումից գույքը հետ պահանջելու համար, բայց մյուս կողմից էլ օրենսդիրը երաշխավորում է տասնամյա ժամկետ սեփականության իրավունքի պաշտպանությունը մինչև այլ անձի կողմից վեճի առարկա գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացումը իրականացնելու համար:

Այսպիսով, պրակտիկորեն հաճախ անհնար է դառնում նշված ժամկետում իրականացնել իրավունքի պաշտպանությունը: Ըստ էության, նշված տասնամյա ժամկետը որոշակի նմանություն ունի շատ երկրներում ամրագրված օբյեկտիվ հայցային վաղեմության ժամկետի հետ¹, որից հետո, անկախ ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելիությունից, չի կարող իրականացվել իրավունքի պաշտպանություն:

Այսպես, հարց է ծագում՝ արդյո՞ք վինդիկացիոն հայցը մերժելուց հետո սեփականատերն իրավունք չունի իրականացնել իր իրավագործությունները և դրանով իսկ խոչընդոտել փաստացի տիրապետող անձին ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք ձեռք բերելը:

Կարծես ստացվում է, որ վինդիկացիոն հայցը մերժելով՝ դատարանը հավաստում է քաղաքացիական օրենսգրքի 280-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով սեփականության իրավունքից հրաժարվելու փաստը, որը կարող է հայտարարվել օրենքով սահմանված կարգով կամ այնպիսի գործողությունների հետևանք լինել, որոնք ակնհայտորեն վկայում են նման մտադրության մասին,² կամ որի վկայությունը կարող են լինել նաև գրանցված սեփականատիրոջ վարքագիծը և վերաբերմունքն այլ անձի կողմից իր սեփականության տիրապետման նկատմամբ, մասնավորապես նրանց կողմից 10 տարուց ավելի տիրապետմանը որևէ կերպ չխոչընդոտելը³: Եվ դատական ակտի արդյունքում սեփականատերը փաստացի զրկվում է սեփականատիրոջ իր իրավունքներից, սակայն ստիպված է իրականացնել սեփականատիրոջ պարտականությունները նաև դրանից հետո՝ մինչև այն պահը, երբ մեկ այլ անձ ձեռք բերի սեփականության իրավունք տվյալ գույքի նկատմամբ (իսկ դա կարող է տեղի ունենալ տարիներ անց):

Այսինքն՝ վինդիկացիոն հայցի մերժման դեպքում գույքի սեփականատերը, շարունակելով մնալ որպես գրանցված սեփականատեր, չունի տիրապետման և օգտագործման իրավագործություն, սակայն, կարծես թե, համենայն դեպս առաջին հայացքից, պահպանում է տնօրինման իրավագործությունը, իսկ փաստացի տիրապետող անձը՝ տիրապետման ու օգտագործման իրավագործությունները: Թվում է, թե սեփականատերը կարող է նույնիսկ օտարել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը. չէ՞ որ տվյալ դեպքում կիրառելի չէ քաղաքացիական օրենսգրքի 278-րդ հոդվածը, որը սեփականատեր չհանդիսացող անձին, ով գույքը տիրապետում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքով, տիրապետման պաշտպանության իրավունք է շնորհում ընդհուպ ընդդեմ սեփականատիրոջ, քանի որ թեպետ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի ուժով տիրապետման իրավունք ունի, բայց տիրապետման հիմքում ընկած չէ ոչ օրենքը և ոչ էլ պայմանա-

¹ Այս կապակցությամբ առաջարկներ են արտահայտվել ձեռքբերման վաղեմության կազմից հանել թե՛ հայցային վաղեմության, թե՛ բարեխղճության հասկացությունները: Տե՛ս **Эмиль Сафин**, Приобретательная давность и объективный срок исковой давности // Снова о наболевшем, Гражданское право, 03.08.2018, https://zakon.ru/discussion/2018/8/3/priobretatel'naya_davnost_i_obektivnyj_srok_iskovoj_davnosti_snova_o_nabolevshem

² Տե՛ս Սահմանադրական դատարանի 2006 թ. հոկտեմբերի 10-ի թիվ ՍԴՈ-650 որոշումը, <http://www.concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-650.htm>

³ Տե՛ս Լևոն Մելքոնյանի ընդդեմ Արուսյակ, Կարեն, Լևոն, Արմեն Կարապետյանների և Հեղուշ Կարապետյանի իրավահաջորդ Ալբերտ Կարապետյանի թիվ ԵԿԴ/2393/02/12 քաղաքացիական գործով 2015թ. նոյեմբերի 27-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=103184>

գիրը, և բացի այդ, այդ նույն հոդվածի 3-րդ մասը գույքը որպես սեփականություն տիրապետող անձին իրավունք է տալիս պաշտպանել այն երրորդ անձանցից, որոնք գույքի սեփականատերը չեն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքով դրա նկատմամբ չունեն տիրապետման իրավունք: Այս հոդվածի իմաստով պաշտպանությունը հնարավոր է սեփականատիրոջ դեմ: Եվ առհասարակ հակառակ պնդումը կհակասեր ձեռքբերման վաղեմության ինստիտուտի էությանը, քանի որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականություն ձեռք բերելու համար սահմանված տասնամյա ժամկետը հենց այն ժամկետն է, որի ընթացքում սեփականատերը կարող է իրականացնել իր իրավունքի պաշտպանությունը:

Ստացվում է, որ գրանցված սեփականատերը չի կարող իրականացնել իր իրավագործությունների պաշտպանությունը, իսկ եթե չկա պաշտպանելու հնարավորություն, ըստ էության գործ ունենք «մերկ» իրավունքի հետ: Փաստացի տիրապետողը նույնպես չունի պաշտպանվելու հնարավորություն, իսկ սեփականության իրավունքի ճանաչման և դրա պաշտպանության մասին միայն տարիներ անց կարող է խոսք լինել:

Վերոնշյալ դրույթների և դատական պրակտիկայի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ թեև սեփականության իրավունքից հրաժարվելու փաստի մասին կարող ենք պնդել արդեն վինդիկացիոն հայցը մերժելու մասին դատական ակտի կայացման դեպքում, սակայն գույքը փաստացի տիրապետող անձի մոտ այդ ակտը միայն կարող է որոշակի շահ, հետաքրքրություն առաջացնել, իսկ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի ու հետևաբար նաև դրա պաշտպանության մասին կարող ենք խոսել միայն քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի բոլոր պայմանների պահպանվածության դեպքում¹: նկատի ունենալով, որ անձը, որին պատկանում է գույքային շահի պաշտպանությանն ուղղված հայցը կարող է համարվել «օրինական ակնկալիք» ունեցող, եթե այդ շահի համար ազգային օրենսդրությունում բավարար հիմք կա. օրինակ, երբ առկա է դրա գոյությունը հավաստող ազգային դատարանների կողմից ձևավորված նախադեպային իրավունք²: Իսկ մինչ այդ, քանի դեռ այդ վավերապայմանները ապահովված չեն, այն ոչ ավելին է, քան զուտ հույսը, քանի որ «օրինական» համարվելու համար «ակնկալիքը» պետք է ավելի կոնկրետ բնույթի լինի, քան սոսկ հույսը և հիմնված լինի օրենքի դրույթի կամ էլ իրավական ակտի վրա, ինչպես, օրինակ, քննվող գույքային շահին առնչվող դատական ակտն է³:

¹ Տե՛ս, ի թիվս այլնի, Անահիտ Մանուկյանն ընդդեմ Ղարիբ Եղիազարյանի թիվ ԵԱԴԴ/1503/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թ. դեկտեմբերի 3-ի որոշումը, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=65063>

² Տե՛ս The European Court of Human Rights, Case of Centro Europa 7 S.R.L. and Di Stefano v. Italy, (Application no. 38433/09), Judgment, Strasbourg, 7 June 2012, կետ 173, [https://hudoc.echr.coe.int/eng#{"itemid":\["001-111399"\]](https://hudoc.echr.coe.int/eng#{)}, The European Court of Human Rights, Case of Kopecký v. Slovakia, (Application No. 44912/98), Judgment, Strasbourg, 28 September 2004, կետ 52, [https://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["44912/98"\],"itemid":\["001-66758"\]](https://hudoc.echr.coe.int/eng#{)}

³ Տե՛ս The European Court of Human Rights, Case of Centro Europa 7 S.R.L. and Di Stefano v. Italy, (Application no. 38433/09), Judgment, Strasbourg, 7 June 2012, կետ 173, [https://hudoc.echr.coe.int/eng#{"itemid":\["001-111399"\]](https://hudoc.echr.coe.int/eng#{)}, The European Court of Human Rights, Case of Kopecký v. Slovakia, (Application No. 44912/98), Judgment, Strasbourg, 28 September 2004, կետ 49-50, [https://hudoc.echr.coe.int/eng#{"appno":\["44912/98"\],"itemid":\["001-66758"\]](https://hudoc.echr.coe.int/eng#{)}, The European Court of Human Rights, Case of Saghinadze and Others v. Georgia, (Application no. 18768/05), Judgment, Strasbourg, 27 May 2010, կետ 103, [https://hudoc.echr.coe.int/fre#{"itemid":\["001-98885"\]](https://hudoc.echr.coe.int/fre#{)}, The European Court of Human Rights, Case of Béláné Nagy v. Hungary, (Application no. 53080/13), Judgment, Strasbourg, 13 December 2016, կետ 75, [https://hudoc.echr.coe.int/eng#{"fulltext":\["CASE OF BÉLÁNÉ NAGY v. HUNGARY"\],"documentcollectionid2":\["GRANDCHAMBER"\],"CHAMBER](https://hudoc.echr.coe.int/eng#{)}

Միևնույն ժամանակ, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման համար անհրաժեշտ է, որ սեփականատերը այդ ժամանակահատվածում չիրականացնի գույքի պաշտպանությանն ուղղված գործողություններ: Մինչդեռ բացառված չէ, որ վինդիկացիոն հայցը մերժվելուց հետո էլ անձը շարունակի իրեն դեռևս սեփականության իրավունքով պատկանող գույքը ազատելու պահանջներ ներկայացնել: Կարծում ենք, քանի որ վինդիկացիոն հայցը մերժելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը հավաստում է սեփականության իրավունքից հրաժարված լինելու փաստը, այդ դեպքում նման գործողություններին չպետք է որևիցե իրավական նշանակություն տրվի: Դրա համար առկա կարգավորումների պարզայում ճիշտ կլիներ ամրագրել նաև դրանից հետո փաստացի տիրապետողի հնարավորությունը՝ պաշտպանելու իր տիրապետումը նաև սեփականատիրոջ գործողություններից:

Ամեն դեպքում նման կարգավորումները, կարծում ենք, չեն ծառայում հայցալին վաղեմության ինստիտուտի նպատակների իրականացմանը՝ մասնավորապես՝ ամենևին չնպաստելով քաղաքացիական շրջանառության կայունությանը:

Նման իրավիճակը հղի է մի շարք վտանգներով: Փաստացի կարող է ստեղծվել իրավիճակ, որ գույքը դուրս է մղվում քաղաքացիական շրջանառությունից՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով, և այն կարող է նորից վերադառնալ շրջանառություն միայն ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչման դեպքում:

Նման իրավիճակն ավելի շատ անորոշություն է մտցնում քաղաքացիական իրավահարաբերություններում, քան թե վերացնում այն¹:

Այդպիսի կարգավորումներն ու իրավակիրառ պրակտիկան կարող են խթանել կեղծ և շինծու գործարքների կնքումը (նման կերպ սեփականատերը կփորձի վերադարձնել իր գույքը), հիմք հանդիսանալ նաև ինքնիրավչության համար²: Իսկ դա, մեղմ ասած, չի նպաստում օրինականության մթնոլորտի ամրապնդմանը:

Անարդար է նաև այն, որ այդ գույքի կապակցությամբ սեփականատիրոջ պարտավորությունները պահպանվում են, չնայած որ նա զրկված է այդ գույքի նկատմամբ իր իրավունքներից: Եվ եթե կոմունալ ծառայությունների դեպքում անձը հեշտությամբ կարող է խզել պայմանագրերը համապատասխան ծառայություններ մատուցող, սպասարկում իրականացնող ընկերությունների հետ, ապա նույնը հնարավոր չի լինի, օրինակ, անշարժ գույքի հարկի դեպքում:

Եվ որքան³ վ է տրամաբանական նման պարագայում անձին ստիպել կատարել պետության հանդեպ իր պարտականությունները (հարկային օրենսգրքի համաձայն (հոդված 224)⁴ անշարժ գույքի հարկ վճարելու պարտավորություն կրում է հիմնականում սեփականատերը): Չէ՞ որ հարկային քաղաքականության նպատակը ենթադրում է անձի վճարումների դիմաց նրա հանդեպ որոշակի պարտավորությունների ստանձնում պետության կողմից, իսկ այս դեպքում արդեն պետությունը չի պաշտպանում սեփականատիրոջը, և ավելին՝ սեփականատերն ինքը այլևս հետաքրքրված չէ դրանում:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ առկա կարգավորումները չեն երաշխավորում ո՛չ գույքի սեփականատիրոջ, ո՛չ էլ փաստացի տիրապետողի շահերի պաշտպանությունն ու ստեղծում են անորոշություն գույքի կապակցությամբ:

¹ Ի թիվս այլնի՝ խնդիրներ են առաջացնում նաև մեկ անձի սեփականության իրավունքի պետական գրանցումը և մեկ այլ անձի փաստացի տիրապետող լինելը (ուստի նաև վերջինիս իրավունքի պետական գրանցման բացակայությունը): Պետական գրանցման նշանակության մասին տե՛ս Սահմանադրական դատարանի 2011 թ. մարտի 4-ի թիվ ՍՂՈ-944 որոշումը, կետ 6, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=66201>

² Չնայած քրեական գործերի ուսումնասիրությունը թույլ չտվեց հաստատել նման կապի առկայությունը:

Հետաքրքրություն է ներկայացնում նաև այս հարցի կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Լիտվայի քաղաքացիական օրենսգրքի¹ համաձայն՝ վինդիկացիոն հայցի դեպքում գործում է եռամյա հայցային վաղեմության ժամկետ շարժական գույքի համար (4.96-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր) և տասնամյա՝ անշարժ գույքի համար (1.125-րդ հոդված): Իսկ ձեռքբերման վաղեմության ժամկետները սահմանող 4.68-րդ հոդվածի 1-ին մասում տեսնում ենք, որ անշարժ գույքի համար սահմանված է տասնամյա, իսկ շարժական գույքի դեպքում եռամյա ձեռքբերման վաղեմության ժամկետ:

Լատվիայի քաղաքացիական օրենսգրքում անշարժ գույքի համար նախատեսված է 10 տարվա ձեռքբերման և հայցային վաղեմության ժամկետ, իսկ շարժական գույքի համար՝ մեկամյա ձեռքբերման վաղեմություն, այն դեպքում, երբ նույն տասնամյա հայցային վաղեմության ժամկետն է կիրառվում²:

Պորտուգալիայի քաղաքացիական օրենսգրքի 517-547 հոդվածներից³ երևում է, որ ձեռքբերման վաղեմության ժամկետները (կախված հանգամանքներից՝ 5, 10, 15 տարի) ավելի կարճ են, քան հայցային վաղեմության ժամկետները (հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը 20 տարի է):

Ինչպես տեսնում ենք, հիմնականում ժամկետները հավասար են, կամ առնվազն հայցային վաղեմության ժամկետն ավելի երկար է, քան ձեռքբերման վաղեմության համար սահմանված ժամկետը, ինչը ինքնանպատակ չէ և միտված է գույքի իրավաբանական ճակատագրի որոշակիության ապահովմանը և այն արհեստականորեն քաղաքացիական շրջանառությունից դուրս չմղելուն:

Վերը քննարկված խնդիրներից հնարավորինս խուսափելու համար թերևս լավագույն լուծումը հայցային վաղեմության և ձեռքբերման վաղեմության հավասար ժամկետների սահմանումն է: Սակայն, նկատի ունենալով, որ ձեռքբերման վաղեմության և հայցային վաղեմության ժամկետների հաշվարկի սկիզբը կարող է չհամընկնել, միայն հավասար ժամկետների սահմանումը նույնպես բավարար չէ: Առավել արդյունավետ մեխանիզմի մասին կարող ենք խոսել միայն հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման հատուկ կարգ սահմանելու դեպքում, որը պետք է սկսվի գույքը փաստացի տիրապետողին անցնելու պահից: Ընդ որում, նկատի ունենալով, որ հայցային վաղեմությունը վկայակոչողը պատասխանողն է, այսինքն՝ գույքի փաստացի տիրապետողը, ապացուցման պարականությունը պետք է դրվի հենց նրա վրա, քանի որ փաստացի տիրապետողին դժվարություն չի ներկայացնի ապացուցել, թե որ պահից է սկսել տիրապետել գույքը:

Սակայն անգամ նման լուծման պարագայում խնդրահարույց են մնում այն դեպքերը, երբ առաջ է գալիս բաց թողնված հայցային վաղեմության ժամկետը հարգելի ճանաչելու հարց: Նման խնդիրներից խուսափելու հնարավոր լուծում է օբյեկտիվ հայցային վաղեմության ժամկետի սահմանումը:

Այսպիսով, առաջարկվում է վինդիկացիոն հայցի համար սահմանել տասնամյա հատուկ հայցային վաղեմության ժամկետ, որի ընթացքը պետք է սկսվի գույքը փաստացի տիրապետող անձի տիրապետման անցնելու պահից, և որը լրանալուց հետո փաստորեն բացառված կլինի անձի իրավունքների պաշտպանությունն անկախ ամեն ինչից:

¹ St´u Civil Code of the Republic of Lithuania, 18 July 2000, No VIII-1864, (Last amended on 12 April 2011 No XI-1312) <https://www.wipo.int/edocs/lexdocs/laws/en/lt/lt073en.pdf>

² St´u The Civil Law of Latvia, adopted on 24 April 1997, (with amendments till 29.10.2015), <http://vvc.gov.lv/index.php?route=product/search&search=civil%20law>

³ St´u Portuguese Civil Code, 1867, August 2018, <https://www.indiacode.nic.in/bitstream/123456789/8312/1/ocrportuguesecivilcode.pdf>

Միայն նման դեպքում հայցային վաղեմության ինստիտուտը կարող է լիարժեք իրականացնել իր նպատակները՝ նպաստելով քաղաքացիական շրջանառության կայունությանը:

Իսկ ինչ վերաբերում է շարժական գույքին, ապա այստեղ մեկ այլ խնդիր է առկա: Եթե վինդիկացիոն հայցի համար հայցային վաղեմության ժամկետը երեք տարի է, իսկ շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման համար սահմանված է վեց ամիս, իսկ որոշ դեպքերում (նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափից ակնհայտ ցածր արժեք ունեցող դեմ նետված գույքի դեպքում (ՔՕ, հոդված 179, մաս 2)), ըստ էության, անմիջապես՝ օգտագործմանն անցնելու կամ սեփականություն վերածելուն ուղղված այլ գործողությունների ուժով, ապա մեծ է հավանականությունը, որ հայց ներկայացնելու պահին հնարավոր է արդեն ծագած լինի մեկ այլ անձի սեփականության իրավունքը:

Ստացվում է, որ շարժական գույքն ուրիշի ապօրինի տիրապետումից հետ պահանջելու համար սահմանված հայցային վաղեմության ժամկետը այդքան էլ արդյունավետ չէ այս ինստիտուտի հետապնդած նպատակների իրականացման տեսանկյունից:

Մանավանդ փոքրարժեք գույքի դեպքում, որը արժեք է ներկայացնում սոսկ սեփականատիրոջ համար, այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անհապաղ առաջացումը դատական պաշտպանությունը դարձնում է փաստացի անհնարին, գոյություն չունեցող խաթարելով արդարադատության մատչելիության իրավունքի բուն էությունը՝ դրանով հանգեցնելով նաև սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Ուստի, կարծում ենք, որ այս դեպքում ևս նպատակահարմար է հայցային և ձեռքբերման վաղեմության հավասար ժամկետներ սահմանել, ինչը առավելագույնս կապահովի թե՛ սեփականատիրոջ և թե՛ փաստացի տիրապետողի շահերը:

ПРИМЕНЕНИЕ ИСКОВОЙ ДАВНОСТИ К НЕГАТОРНЫМ И ВИНДИКАЦИОННЫМ ИСКАМ

Кристине Габузян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

В данной статье обсуждается применение института исковой давности к негаторным и виндикационным искам. В частности, выявлены проблемы, возникшие на практике в связи с этим, и подчеркивается необходимость четкого разграничения указанных исков с точки зрения правильного применения сроков исковой давности. В статье рассматривается соотношение сроков исковой и приобретательной давности и вопрос установления сроков, которые не только позволят сторонам правоотношения эффективно защищать свои права или интересы, но и максимально способствуют стабильности гражданского оборота.

THE APPLICATION OF LIMITATION PERIODS TO NEGATORY AND VINDICATION CLAIMS

Kristine Gabuzyan

PhD Student at the YSU Chair of Civil Law

The current article discusses the application of limitation periods to negatory and vindication claims. In particular, the article identifies the problems arisen in practice in connection with this issue, and emphasizes the need for a clear differentiation of these claims from the point of view of the correct application of limitation periods. The article examines the correlation between the limitation periods and acquisitive prescriptions, and the issue of establishing such periods that will not only allow the parties of a legal relationship to effectively protect their rights or interests, but also will contribute to the stability of civil circulation.

Բանալի բառեր` հայցային վաղեմություն, վինդիկացիոն հայց, նեգատոր հայց, ձեռքբերման վաղեմություն, փաստացի տիրապետում, սեփականության իրավունքից հրաժարվել

Ключевые слова: исковая давность, виндикационный иск, негаторный иск, приобретательная давность, фактическое владение, отказ от права собственности

Key words: limitation period, vindication claim, negatory claim, acquisitive prescription, actual possession, waiver of ownership